

մատչելի դառնում. լսողութեան գործարանին սգնութեան է հասնում և տեսողութիւնը: Սորա վերան պիտի աւելացնել և գեղասիրական արժէքը, մանաւանդ, որ Սահակ ա. քահանայի ընտրած պատկերները բոլորը դասական նկարիչների և արձանագործների երկեր են: Անշուշտ աւելի լաւ կլինէր, եթէ պատկերները մեծ լինէին և դունաւոր այն էլ տաւանձին և ոչ դասադրելի մէջ, ինչպէս նկատել է հեղինակը իւր յառաջաբանում, բայց այդ էլ կապուած կլինէր մեծ ծախսերի հետ, որով և անմատչելի աղքատ աշակերտները և դիւղահան դըպրոցների համար:

Տարաբաղդաբար դասագրքի մէջ սպրդել են աեղ տեղ ապագորութեան սխալներ որ յատկապէս դասագրքի մէջ ցանկալի չէ:

Գ.

Բժիշկ Սիմէօն Շահ-Նազարեանց «Սեդրակ Մանգի-նեանը՝ իբր՝ սեռույ Երեւանի հայոց թեմական հոգեւոր դպրանոցի» (1892 թ. սեպտեմբեր-ց 1895 թ. յունուար), տպարան Ե. Աւետիքեանի, Մոսկվա, 1907, 100 էրես, գինը՝ 50 կոպ.:

I

Սիրուն միտք է յղացել ԸԺ. Ս. Շահ-Նազարեանցը, — տալ մեր դպրոցական ասպարէզում գործած անձնաւորութիւնների պատկերը, արտանկարելով այն ձեռի տակ ունեցած պաշտօնական նիւթերից:

Այս անգամ նա տալիս է՝ մեր դպրոցական պատմութեան մէջ յայտնի՝ մանկավարժ Սեդրակ Մանգինեանի տեսչական պատկերը:

Բայց այդ հանգամանքն աւելի է կշիռ ոտանում, երբ յիշում էք, որ ինքը հեղինակն ևս եղած է այն դպրոցի երեւման տեսուչը, որտեղ, իրանից յետոյ, գործել է Ս. Մանգինեանը: Ու, այս դէպքում ոչ միայն մասնապէս դպրոցում, այլ և հանրապէս կեանքի մէջ՝ տեղի է ունենում մի երևոյթ, հազուադիւտ երևոյթ, որ պատիւ է բերում նրա նախապատճառին. — դպրոցի նախկին պաշտօնեան հրապարակ է հանում յետնորդի պատկերը, այն էլ ինչպէս շուտով կտեսնուի, դրական կողմով:

Դիւրքը բաղկացած է երեք մասից. «Յառաջաբանի փոխաբէն», որ բռնում է 7 էրես, «Յաւելուած»՝ 26 և իսկական նիւ-

ԹԸ՝ 69: Սահայն, եթէ նկատի ունենանք, որ Ա. Բահաթրեանի ու Ս. Ժ. Բեգնաղարեանցի մասին խօսող ու երեք երես ըսող ծանօթութիւններն էլ գործին, իսկապէս, չեն վերաբերում, ըսեն գիրքը կունենայ ընդամենը՝ 66 երես:

Առաջ երկու խօսք՝ գրքին կցուած կտորների մասին:

«Յաւելութեամբ» — որ խօսում է՝ Ս. Մանգլինեանի դէմ «Մշակի» ըսած ընթացքի մասին, — չնայելով իր մէջ պարունակուած ճշմարտութիւններին — հեղինակի կողմից աւելորդ փաստաբանութիւն է և թոյլ չէ տալիս, որ նրա հանդէս բերած անձնաւորութիւնը պարզ կանգնի առջևներս: Ուղղակի միջնեցնում է մեզ ցոյց տալիք դէմքը:

Պէտք է ասել որ առհասարակ ԸԺ. Շահ-Նաղարեանցը կարճ ու ամփոփ չէ գրում, ու, այդ պատճառով, նրա գրուածքները, սովորաբար սիրով չեն կարդացւում:

Ինչ վերաբերում է «Յառաջաբանի փոխարէն» կտորին, կարելի էր բաւականանալ նրա միայն այն մասով, որի մէջ հեղինակը հանուր հայեացք է դնում մանկավարժութեան տարբեր շրջանների վրայ: Մնացածը — բացի VIII և IX⁹ երեսներից —, ինչքան էլ գեղեցիկ մտքեր լինի պարունակելիս, գործին չէ վերաբերում:

Գրուածքի գլխաւոր արժանիքը, որ կենդանի հաւատ է ներշնչում կարդացողին, նրանումն է, որ նա, այդ գրուածքը, հինմնուած է շօշափելի փաստերի վրայ, — սրտնք, պատիւ երբեմնի տեսուչ — հեղինակին, այսօր դուրս են բերւում զպրօցի փակ պատերից ու հասարակութեան սեփականութիւն դառնում:

Ինձ մնում է մի — երկու նկատում էլ անել ու անցնել իսկական գործին:

Հեղինակին զբաղեցնողն պէտք է լինէր միայն մերկ իրականութիւնը: Բայց նա, ունենալով ձեռի տակ — զպրօցական արձանագրութիւնների, օրագրութիւնների ու «գործերի» պէս անհրաժեշտ փաստեր, իր սեփական դատումներն ու կարծիքներն էլ է մէջ բերում, թոյլ չտալով, որ կարդացողն ինքն անի իր եզրակացութիւնը: Երկուսից մէկը, կամ պաշտօնական փաստաթղթերը պէտք է խօսին, կամ՝ հեղինակը: Իսկ վերջինը, եթէ ուզում էր ըր եզրակացութիւնն էլ մէջ բերել, այդ կարող էր անել՝ նիւթն ամբողջապէս մեր առջևը դնելուց յետոյ, բայց ոչ նիւթի հետ, արանք-արանք:

Միւս կողմից, կարիք չկար առաջուց, ուղղակի առաջաբանից, կարդացողին տրամադրելու, աւելի ճիշտ՝ նախապաշարելու, քննելի անձնաւորութեան վերաբերմամբ գործածելով

որոշ որակիչներ՝ «եղակի մարդ», «անզուգական գործիչ», «հաշար-
կաւոր մանկավարժ» և այլն, քանի որ կարգացողն ինքը կարող
էր որակել՝ իր ստացած տպաւորութիւններէ հիման վրայ: Սրա-
նով ես չեմ ուզում փոքրացնել մեր դպրոցական վեաբանի
արժանիքը, քանի որ ինքս էլ նրան, իբրեւ մանկավարժի, հա-
մակրողներէն եմ եղել ու եմ:

Եթէ կայ գրքի մէջ և ուրիշ թերութիւն, այն է, որ հեղի-
նակն ինքն էլ, իբրեւ նոյն դպրոցի նախկին գործող, շահագրք-
գրուած է գործող անձնաւորութիւններով: մի հանգամանք,
որ խիստ աչքի է ընկնում, երբ, նա, փառաթղթերի թելադրա-
ծից դուրս, տալիս է և հոգաբարձուների դէմքերը:

11

Գանք հիմայ բուն նիւթին:

Ս. Մանգինեանի տեղութիւնն երևանի թեմական դպրո-
ցում երկարատե չէ եղել: Ընդ ամենը՝ մօտ 2 1/2 տարի (1892
— 1895): Նա այդ դպրոցում միաժամանակ ունեցել է մանկա-
վարժութեան, հոգեբանութեան ու արամաբանութեան դասեր,
ստանալով 1590 ռ. ռոճիկ:

Մեր զուտ մանկավարժական գործի այդ պիօները դէմքը
ընորոշելու համար, իսկապէս, շատ քիչ բան է տուել արձանա-
գրութիւնը, որ բռնում է գրքի միայն 1/4 մասը՝ 24 երես:

Այդտեղ մտած են՝ ա) Մանգինեանի կիսամեայ հաշուե-
թուութիւնը և բ) ուսուցիչ Յ. Գիւլնազարեանի և (նախկին՝ տեղ-
չի պաշտօնակատար) ուսուցիչ Նիկ. Տէր-Գէորգեանի հետ նրա
ունեցած ընդհարումը:—Գրքի վերջումն էլ հանուած են նրա
մանկավարժական դաւանանքները:

Կիսամեայ հաշուետուութիւնը, որ բռնում է 8 երեսից ա-
ւելի, և որ 1893 փետրվարի 18 ին, Մանգինեանը ներկայացրել
է դպրոցի հոգաբարձութեանը, շահագրգիռ է շատ կողմերով:
Ես կանցնեմ հարեանցի:

Առաջ բերելով դպրոցական գործը՝ նախկին ու իր օրերի
համեմատութեամբ, տեսնում ենք որոշ բարեփոխում, նախկին
մեռած ձևականութիւնների դատապարտում, մանկավարժա-
կան սկզբունքների ու կարգերի առողջ ու թարմ հոսանքներ և
առհասարակ դպրոցը բարձրացնելու մեծ ջանքեր:

Դպրոցի բարձր վիճակը շատ աննախանձ է եղել թէ՛ այն
պատճառով, որ գործը շատ խալուտ հիմքերի վրայ է եղել
գրուած, և «ուսուցիչները սովոր են եղել խօսել աւելի իրա-
ւանց, քան պարտականութեան մասին» և թէ՛ այն, որ նրանց

«գործունէութեան մէջ մի խելացի միութիւն չէ հաստատուել» —մեր դպրոցները ամենահիւանդոտ կողմը:

Դրա հակառակ, Ս. Խ. Յովհաննէս ու Կաթողիկէ եկեղեցիների գաւթում հիմնուած նախակրթարանների ուսուցիչները «ձգտում են ոչ թէ բաւականանալ լիկ դաս տալով, դաս հարցնելով ու թուանշաններ դնելով, այլ պարտականութիւն են համարում շարունակ օգնել աշակերտին, որ նրան օրինաւոր դորացնեն... ոչ թէ յանցանք են համարում աշակերտի պակասութիւնը, այլ մարդասէր երկայնամտութեամբ ջանք են անում ուղղել թերութիւնը... այս բոլորի հետեանքն այն է, որ այնտեղ... այս տարուայ սկզբին Բ. նախակրթարանում ունեցել ենք 73 աշակերտից 36 երկրորդ տարի մնացող, իսկ այժմ 88 աշակերտից միայն 12 թոյլ աշակերտ ունինք»:

Պակաս շահագրգիռ չէ և ընդհարման գործը:

Ուսուցիչ Յ. Գիւլնաղարեանը յենուելով Նիկ. Տէր-Գէորգեանի պաշտպանութեան վրայ, ամէն կերպ իր կապրելոյնն է առաջ քշում, գնալով տեսչի դէմ:

Նա «նոյեմբերի 12 ին դադարեցնում է իր դասերը Բ. դասարանում», որովհետեւ «տեսուչն այնտեղ նստեցրել է մի աշակերտ՝ առանց ուսուցչական ժողովի վճիռն ունենալու»:

Ըստ ինքեան, ու այնպիսի մի դէպք է, որ — եթէ ճիշտ էլ լինէր ուսուցչի բերած պատճառաբանութիւնը, — տեսչի կողմից այն աստիճան անուղղելի մի սխալ չէ, որ արժենար ահագին ազմուկների առիթ տալ: Ու, պատիւ տեսչին. այնքան լայն համբերութեամբ, այնպիսի եղբայրական վերաբերմունքով ու այնպէս խելացի է տանում նա այդ փափուկ գործը, որ պատիւ կարող է բերել նոյն իսկ աւելի լուսաւորուած երկրների դպրոցական ամէն տեսչի: Այստեղ Մանգինեանը ուսերով չափ բարձր է կանգնած իր հակառակորդներին: Սա այնպիսի համապարհի ու հաղուագիւտ գիծ է նրա տեսչական քայլերի մէջ, որ թէ նրա ու թէ նորա ժամանակում, իսկապէս, մոմով լիւնտուելու է:

Թէպէտ արժէ ծայրէծայր կարգաւ դպրոցական կեսանքի՝ 13 երես ըննող արդ տխուր միջադէպը, բայց ես նրանից կրեւրեմ միայն այն կէտերը, որոնցով պաշտպանուած է տեսուչն ու ծայրայեղ բոպէին, նիստը փակում:

1) «Զնի ընդունելութեան համար ոչ թէ ձեր թոյլատուութիւնը կիւնդրէի, այլ նրա ընդունելութիւնը կյայանէի ձեզ... և միայն կառաջարկէի, որ պարզաբար վաւերացնէիք իմ գործողութիւնը, որի համար բաւական հիմունքներ եմ ունեցել...» 2) «Դնը դեռ աշակերտ չէ... նա աշակերտ կհամարուի յունիւա-

ըն հարցաքննութիւնից յետոյ... 3) մի և նոյն պայմանով ընդունելու օրինակն տրդէն տուել էք ինձ, երբ որ, տարուայ սկզբին, ձեր վճռով, ... ընդունեցիք 8 ազատ ունկնդիրներ, ... 4) 2-եր, ... խնդիր է տուել... սեպտեմբերին, և ուշացել է հիւանդութեան պատճառով, ... և այլն:

Մանդինեանի մանկավարժական դաւանանքները, որ հեղինակը քաղել է արձանագրութիւններից.

1) «Աշակերտին դասարանից դուրս չանել, յաճախ պատիժներ տալուց խուսափել, 2) չոքացնելը չպիտի գործադրուի, 3) աշակերտին պատժելով 2 կամ 3 ժամ, քաղցած ենք թողնում. այդքանը շատ է փոքրի համար... եթէ ուսումնարանում չկայ ուսուցիչ կամ վերակացու, ... ոչ մի աշակերտ չպէտք է մնայ, և ուսումնարանն անպատճառ պէտք է փակուի. 4) թող վեցերորդեցիները հսկեն փոքրերի վրայ, ... Թող կառավարել սովորեն, ... 5) ... մեզ վրայ մեծ պարտականութիւն է դրուում, ... աշակերտներին մէջ ինքնասիրութեան ոգի ներշնչել, և ոչ... ծեծին սպառնալիքին... զիմէ, 6) մեր աշակերտ է միայն նա, ով որ հնազանդ է մեր կարգերին, ... 7) դպրոցում, - կարգապահութեան հաւատարմութիւն մտցնել. 8) ... եթէ աշակերտը ձեռք է բարձրացնում իւր ուսուցչի վերայ, նա, ուրեմն, կտրոււմ է իր բոլոր բարոյական կապերը ուսումնարանի հետ... միակ միջոց է մնում, որ արաքոնքը նրան... 9) եթէ ուսուցիչը երկար ամիսներ միշտ դժգոհ է ամբողջ դասարանից, ... պէտք է փոխուի դասատուութեան կերպն ու եղանակը...»:

Ձեւ կարող լուծութեան տալ Մանդինեանի մի նամակը, որ նա գրել է ուսուցիչ Համադասոպ Խուդաբաշեանին, 1894 մարտի 23 ին, ուսուցչական ժողովի յանձնարարութեամբ, այն առիթով, որ վերջինը, գառի միջոցին, աշակերտների ներկայութեամբ, վատ ածական է տուել ներկայ հոգաբարձուին:

Այդ նամակում տեսուչը, ժողովի բարոյական զայրոյթը յայտնելով, ի միջի այլոց, գրում է. «Երէկ... դուք Ձեզ պատիւ համարեցիք, Ձեր աղաոտութիւնը թափելով, թողնել նոյնը և հեռանալ... յոյս ունիմ, որ... կդադարեցնէք Ձեր դատերը, մինչև որ Ձեր աղաոտութիւնը ինքներդ լղէք և սրէք, ...»:

Հեղինակը զիտմամբ է գնում մեր առջևն այդ նամակը, իբրև նմուշ տեսչի զայրացման: Բայց ինձ թւում է, որ Մանդինեանը կարող էր աւելի՛ չափաւոր լինել իր զայրոյթի մէջ, մանաւանդ նամակով արտայայտելիս: Նրան երբէք չէ պակասել լաւ բառեր դործածելու շնորհքը:

Ինձ մնում է աւելացնել, որ միայն Երևանի թեմական գպրոցի Մանդինեանը բաւական չէ մեզ, այն էլ՝ լոկ նրա մէկ

հատիկ արձանագորութեան մէջ: Նրա գէմքը լրացած տեսնելու համար, մեզ հարկաւոր է այլ ևս այս կամ այն կողմով աւելի խոշոր հիմնարկութիւններէ՝ Ներսիսեան դպրոցի ու Գէորգեան ձեմարանի Մանդինեանը՝ թէ իբրեւ տեսուչ և թէ իբրեւ գործիչ:

Էմմ, Բաե. Նազարեանց.

ՄԻ ՊՈՌՆՈԴՐԱՅԻՍ

Տխուր և անմխիթարական է դաւառական կեանքը: Սիրտ ամբողջ, մխիթարիչ երևոյթներ եթէ լուսով փնտռելու լինիք, հազիւ գտնէք. իսկ աւերող, վայրենացնող և անբարոյականացնող երևոյթներ—որքան ուզենաք: Յետագայ փաստը այդպիսիներից մէկն է կազմում:

Ծննդեան տօներին, կարծէք իբրեւ նոր-տարուայ ընծայ եռանդուն կերպով երևանցիներին էր բաժանուում մի անարժէք (զին չունեցող) գրքոյի, որի վերնագիրն է «Այրի քահանաների կրկնամուսնութեան խնդրի առթիւ»¹⁾, Հետաքրքրութիւնդ չարժուում է: Մտածում ես՝ ահա հրապարակի վրայ դրած մի հրատապ խնդիր, տեսնե՞ք՝ ինչպէս է չօչափուած և ինչ կզրակացութեան հասցրած այդ նուրբ հարցը: Բանում ես գրքոյի, և ո՞վ զարմանք, չեա կարողանում կարգալ: Յեկ է, ամբողջովին ցեխ: Որոշ հոգատարութեամբ, յատուկ խնամքով՝ գրքի հեղինակը—«Միրզա»-ն, հաւաքել է փողոցային, կիներոյական հայհոյութիւնների ամենավատ տեսակները և միացնելով իր ապականուած երևակայութեան ծնունդ, խայտառակ պատկերների հետ, կազմել է, այսպէս ասած, մի «հայհոյութիւնների բառարան»: Այրի քահանաների կրկնամուսնութեան խնդիրը շատ հեռաւոր և վայրի վերոյ ձևով միայն, այն էլ տեղտեղ հիւսել է այդ հայհոյութիւններին, որից ոչինչ չեա հասկանում: Ոյժ գործ դնելով քեզ վրայ, շարունակում ես ընթերցանութիւնը, բայց տեսնում ես, որ շարունակ նոյն ապականուած երևակայութիւնն է, նոյն խայտառակ հայհոյանքները, նոյն ցեխը... Օրինակներ բերել այդ ցեխից, փաստեր առաջ բերել պատկերի գրքոյից, նշանակում

1) Ալէքսանդրապոլ. տպարան Յ. Ղառապեանի, զինը ?